ԵՐԵՔՇԱԲԹԻ 2 ՅՈՒՆԻՍԻ 1881, № 100

№ 100 ԵՐԵՔՇԱԲԹԻ 2 ՅՈՒՆԻՍԻ 1881

ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆ

ԿՍԱՆԵԻԶՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

Հրատարակվում է ամեն օր բացի երկուշաբթի և տոն օրերից։
Տարեկան գինն է 10 ռուբլի։
Առանձին համարներով հրատարակիչը 5 կոպ.։

Խմբագրատունը բաց է ամեն օր բացի կիրակի և տոն օրերից առաւօտեան 10—2 ժամը կէսօրից յետոյ։

Յայտարարութիւնների համար վճարում են ամեն մի բառին 1½ կոպէկ։

Յայտարարութիւնները ընդունվում են խմբագրատանը և պ. Բ. Շահվերդեանի գրավիճռնում։

Յայտարարութիւնները ընդունվում են հայկական և օտար լեզուներով։

Օտարազգաբացիք դիմում են ուղղակի խմբագրութեան հետեւեալ հասցէով. Въ редакцію газеты «Меду Айастана», въ Тифлисѣ, или Rédaction de «Meghou Haïastani», à Tiflis (Caucase).

Խմբագրութեանս ուղղած թղթ յօդուածները եւ թղթակիները պէտք է պարզ գրուած լինին գրոշի ստորագրութեամբ եւ հասցէով, խմբագրութիւնը կարող է փոփոխել, ուղղել եւ կրճատել յօդուածները։ Խմբագրութիւնը իւր վերայ չէ առնում յետ ուղարկել յօդուածները եւ պատասխանել երկու ամիս ընդհատ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ։

Պ. Քիւրքճեանի լուսանկար պատկերները։
Ա ղ գ ա յ ին.—Թղթակցութիւն Նոր-Բայազէտից։
Ք ա ղ ա ք ա կ ա ն.—Թիւրքիա. —Քաղաքական լուրեր։
Մ ե ղ ո ւ ի» հեռագիրներ։
Մ ա ն ր լ ո ւ ր ի ր։
Յ ա յ տ ա ր ա ր ո ւ թ իւ ն ն ե ր։
Բ ա ն ա ս ի ր ա կ ա ն.—Թղթակցութիւն Կ. Պոլսից։

ԹԻՖԼԻԶ, 2 ՅՈՒՆԻՍԻ 1881 թ.

Մենք քանիցս անգամ յիշեցինք մեծ. պ. Քիւրքճեանի լուսանկար պատկերների մասին, որ հանած են Անուշ աւերակներից և բաղմիցս խօսեցինք այդպիսի յիշատակարանների պահպանութեանց կարեւորութեան մասին։ Մոտերումս միջոց ունեցանք տեսնելու պ. Քիւրքճեանի Անուշ աւերակների ծաւալագիտակի (ստէրէօսկօպ) համար պատրաստած պատկերները։ Այսպիսի ընտիր և մաքուր աշխատանք չատ քիչ ենք տեսած, վնայելի էին։ Այս պատկերները ապագիի տակ ցոյց են տալիս քնութիւնն իւր կատարելութեամբ. մարդ նայելով չէ կշտանում։

Կաթուղիկէ մայր եկեղեցին ներկայացնում է առանձին հայկական ճարտարապետական ոճ, որ գուցէ մայրը լինի միջին դարերում Եւրոպայում տիրապետող գոթական ոճին։

Ահա և Բագրատունեաց և Պահլաւունեաց պալատների աւերակները, որոնց հիանալի ճարտարապետութիւնը կարող էր ջրել այն անձանց կարծիքն, որ ուրանում են հայոց մէջ աշխարհիկ ճարտարապետութեան գոյութիւնը։

Ահա և բերդի պատերի պատկերներն, որոնք ցոյց են տալիս մեր նախնեաց ռազմագիտական արհեստն իւրեանց քաղաքը պաշտպանելու համար, իսկ եթէ կը կամենաք քնութեան դեղեցկութեամբ հիանալ, նայեցէք Ախուրեանի և Ծաղկոցաձորի տեսարաններին և զարմացէք ու հիացէք։

Պ. Քիւրքճեանը մեծ գործ է կատարել և կատարել է նաեւ ընտրհքով և եռանդով։ Այսպիսի ծաւալագիտակ պատկերներ հազուագիւտ են, իրանց նրբութեամբ և մաքրութեամբ, որովհետև մեր չնորհալի արհեստաւորին դէպի իւր այդ ծանր աշխատանքը դրդել է ոչ չահասիրական զգացմունքն, այլ ջերմ սէրը դէպի իւր հայրենի աւերակների յաւերժացումն, լոկ բանաստեղծական մաքուր զգացմունքը։

Ուրախութեամբ լսեցինք, որ մեծ. պ. Գ. Եւանգուլեանցն ու պ. Պ. Ղամբարեանցը յանձն են առել այդ պատկերների ժողովածուն (40 պատկերն արժէ 20 ռուբլի) տպագծել իրանց բարեկամների և ծանօթների մէջ։

Մենք ևս այդ մասին իրաւունք խնդրեցինք և մեր խմբագրութեան մէջ բաժանորդագրութիւն ընդունելու մանաւանդ դաւառներից և ստացանք այդ իրաւունքն, որ մասին և յայտնում ենք։ Ներկայումս պ. Պ. Ղամբարեանցի արտասահման գնալու պատճառով, նորա փոխարէն կարող են ցանկացողք դիմել մեծ. պ. Միքայէլ Թամամշեանցին (առևտրական բանկի կառավարչին) և պ. Մ. Թաւադեանցին (նոյն բանկի գլխաւոր հաշուապահին)։ Այսպէս ուրեմն ցանկացողք կարող են դիմել մեծ. պպ. Գ. Եւանգուլեանցին, Մ. Թամամշեանցին, Մ. Թաւադեանցին (Նոյն բանկի գլխաւոր հաշուապահին)։ Այսպէս ուրեմն ցանկացողք կարող են դիմել մեծ. պպ. Գ. Եւանգուլեանցին, Մ. Թամամշեանցին, Մ. Թաւա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Կ. ՊՕԼԻՍ։

18/30 մայիսի.

Ինքնօգնութեան քարոզիչներ, Միացեալ ընկերութիւն, Տօքթէօռ Փէչտմալճեան, Ազգատութեան վիճակը, Թունուզ և Եգիպտոս։ Սուլթան Ապդիւլ Համիդ և տօքթէօռ Տիքսընի նամակը։ Մ. Չերազ։

«Օգնէ քեզի, որ Աստուած ալ քեզի օգնէ», կըսէ եւրոպական առածը։ Այս առածը հին է, և տեղի տուաւ մեր մէջ ինքնօգնութիւն բառին, ով կ'ուրանայ իւր օգտակարութիւնը։ Բայց կարկամեալ մարդու որ ճամբուն վրայ ինկած կը մուրայ, զրուցէ և անցիր «օգնէ դու քեզի և չարժէ». հիւանդին որ չարժելու կարողութիւն չ'ունի՝ որ ջուրը բերան տանելու կարողութիւն չ'ունի, զրուցէ գնա ապրիլը և ծարաւդ յագեցուր՝ օգնէ ինքզինքդ. սովալլուկ երկրի մը բնակչին ըսէ՝ վճարէ քու տուրքդ և գնա ապրէ ինչպէս որ կրնաս. առ զէնքը ուղևորին ձեռքէն, ըսէ իրեն, պաշտպանէ ինքզինքդ զինեալ աւազակէն, վատ ես որ ինքզինքիդ օգնել չը գիտես. երկիրը բարերար է՝ երկրագործութիւնը յետամնաց, ուրեմն աշխատէ վարէ, ցանէ և հնձէ, բայց օտարը կը յափշտակէ և չի թողուր որ վայելէ, ըսէ իրեն՝ անպիտան ծոյլ, դու արժանի ես անօթութենէ մեռնելու, միթէ քեզի նման մարդ չէ ամերիկային, ըսէ հայուն, անա աղնիւ բուրդ և մնաբեր մանէ, հիւսէ, վաճառէ և հարստացիր, չես տեսներ աշխարհի հարուստ ժողովուրդները՝ դու որ ցնցոտիներու մէջ կը մեռնիս, իսկ եթէ նա երը իւր խեղճ մասերը ցոյնէ որ չի կրնար մրցիլ այդ չաղուոյ հանգին զօրութեան հետ, զրուցէ իրեն՝ անպիտան անդամալոյծ, մեռիր, դու պատանքի անգամ արժանի չես։ Զրուցէ հայ գարնին թէ թող քու նախնեաց հինաւուրց արհեստդ՝ հետեէ նոր արհեստին, թէպետ նա քեզ ցոյց կրնայ տալ իւր ճարտար մատանց ձեռագործ յայլ և նման հերոպական մաքուր չինուածոյն որ հազիւ թէ գինք կ'ապրեցնէ և արհեստը իրեն առելի կ'ընէ և գինք ըստ բաւականի չի վարձատրէր։

Ա՛ս խօսքերն լինին, վասն զի ունինք հիմա քարոզիչներ, առաքեալներ որոնք չենք հասկնար թէ չինչ հոգւոյ ղրկեալ, ամեն օր ազգային վիճակին գատաւոր կը հանդիսանան, առանց իմանալու և որոշելու երկրին ընդհանուր անհատութեան վիճակն առաջ եկած վնասը, և եղած փոքրիկ բարութեան աղբիւրներն նաև կը կորցնեն։

Ես չի խօսեցայ Միացեալ ընկերութեան վրայ, երբ ուրիշներուն անհամբերութիւնը-հեռագրաց դիմից, ուրախարար լուր մը հաղորդելու թէ «առաջնորդինք անօրէն ժողովը և տօք. Տիգրան Փէչտիմալճեան ընտրուեցաւ պիտ նոր անօրէն ժողովոյ»։ Ո՞վ որ ազգային կրթութեան բարեկամ էր Հայաստանի հայոն համար սիրութեամբ տեսաւ այս յաջողութիւնը, վասն զի տարուան մը մէջ չորս անգամ անօրէն ժողովոյ փոփոխութիւն լուսաւորեան գործակ չէր, և լաւ աղեցութիւն չէր ընկր ազգին վրայ, մանաւանդ որ այդ տապալեալ անօրէն ժողովոյ գլուխը և անդամք անհնարութեամբ ամեն մարդ տեսած էր թէ կ'աշխատէին, եղած գործը առաջ տանելու համար, որ փորը պէտք չէ համարել, վասն զի ինչպէս կըսէր երեսփոխանաց ժողովքին նորընտիր առնապետը «3000 էն աւելի հայ մահկանք 27 դպրոցներումէ կրթութիւն կ'առանյին»։ Բայց անձնասիրութիւն երեցածն չատերու ամբաստանութեան և հակառակութեան առիթ եղաւ երիտասարդաց ոմանց, որք անդուլ յարձակումներով կը դատափետէին և կը ձանձրացնէին այս գործիչները։ Եւ վերջապես փափաքուն հասան և կրցան այդ յաջողութեան առետուր հեռագիրը հասցնել ի Տփխիս զոր «Մշակ» հրատարակեց։ Բայց ինչպէս դիւրին է կործանել և դժուարին չինել, այսպէս նաև դիպեցաւ այս պարագային մէջ. տապալողք ըստ կանոնաց ընկերութեան ներկայից երկու երրորդ մասին քուէով պիտի ընտրէին անօրէն ժողովոյ պետը, ընտրեալ տօքթ. Փէչտիմալճեան առաջին անգամ որ ներկայացաւ, յայտնեց թէ ինք կը ցանկայ «որ Միացեալ ընկերութիւնն բարեփոխէ իւր ուղղութիւնն և իւրեան նպատակ աձնու նախ Փոքր-Ասիոյ հայոց տնտեսական դրութիւնն բարելքել»։ Ուստի առաջարկեց դնել «Նպատակ—Հայաստան և Կիլիկիոյ հայոց տնտեսական բարեւքմանն նպաստել և նոցա մէջ նախնական ուսուցմն ծաւալել»։ Բնական է թէ չատերու փափաքելի էր իմանալ թէ տօքթէօռին այդ նպատակին հասնելու համար միջոցներն որոնք էին, բայց ո-

չինչ հարկաւոր էր այդ մասին ծանրանալ, որովհետև նա այդ մեծ ձեռնարկութեան որ ընդարձակ երկրի մը տնտեսական բարւոքման կը ձգտի միջոցներն չէր յայտներ այլ զգալուն կը պահէր, կամայ թէ ակամայ ընդունեցան իւր հրաժարականն, փափաքելի է որ տօքթ. Փէչտիմալճեան իւր խոստումնքին վրայ կենայ և գործադրէ այս խօսքերը. «ազգային «իրական չահուց մասին ունեցած գա«զափարներս պիտի մղեն զիս ոչ միայն «չ'ընդունել այդ լոկ կրթական պաշ«տօնն, այլ և գտնել մի այնպիսի ըն«կերութիւն որ համապատասխանէ փո«քըր-Ասիոյ տեղական պիտոյից»։ Մենք յաջողութիւն կը մաղթենք ամեն աշխատութեանց որ ազգին բիւրաւոր պիտոյից դարման կը փնտռեն, կը մաղթենք որ այդ ընկերութիւնն եթէ կայ տօք. Փէչտիմալճեանի օժանդակութեամբ յառաջանայ, եթէ չի կայ հիմնուի ժամ առաջ և բարգաւաճի յօդուտ ազգին։ Միայն եթէ բան մը կայ որ զմեզ թերահաւատ կ'ընէ այն է, որ Պէրօնսթիլդի նախարարութիւնը որ կը ցանկար Փոքր-Ասիոյ ամեն տեսակ յառաջադիմութեան, յորոց մէջն է նաև տնտեսական բարւոքմանց հիմնական բարելաւութիւնը, արդելքներու պատահեցաւ, և ոչինչ չի կարողացաւ ընել, քան զՊիքօնսֆիլդ բարերաղ կը փափաքինք մեր հայրենակիցը, և իբ կազմելիք ընկերութիւնը։

Բայց այս հրաժարականաւ Միացեալ ընկերութեան կարկամեալ և տարտամ վիճակը կ'երկարի, ծախքը կը չարունակէ, հասոյթը չի հաւաքուեր, և այս հակառակութեանց օգուտը ընկերութեան դպրոցներուն մէկ կողմանէ փակուելուն

Նախաչափ մը կը լինի և ընկերութեան քայքայումն. երիտասարդք որ իրենց սրամտութիւնը և աչխոյժը այս պատերազմին մէջ վատնեցին, արդէն կը տեսնեմ որ ձեռքերնին կը լուանան և անպարտ ինքզինքնին կը դատանեն։

Մենք իբրև պարզ ժամանակագիր կը ներկայացնենք վիճակ մը, իբրև ազգին մի անչան անդամ կը ցաւինք եթէ տեսնենք Հայաստանի դպրոցներուն փակումը և լքումը, նոյնպես կը ցաւինք երբ կը մտածենք որ կան այնպիսի անձինք ազգին մէջ որք ուրախութեամբ պիտի նկատեն ամեն ազգային դժբաղդութիւն և անյաջողութիւն որ և իցէ պատճառներէ որ գայ։ Հիմա այսօր ինչ տագնապ որ կրէ հայ ազգը, իրենք կ'ըսեն. «Գնացէք, ձեր արժանաւոր պատուհասը կը կրէք»։ Եթէ դպրոց բանայ ազգը կ'ըսեն. «Հայաստանի և Կիլիկիոյ հայք սովատանջ են կամ աղքատ. նոքա տգէտ են իրենց աչխատութիւնն առաւել արգասաւոր առնելոյ մասին, Նոքա գրեթէ յառաջ հացի պէտք ունին և գիտութենէ յառաջ արհեստ»։ Ուրեմն գոցեցէք դպրոցները, որ չեն զուրկեր համարձակ, այլ կ'իմացնեն, Իրենց այս բնաբանը զօրացնելու համար ամեն միջոց բարի է, ամեն երգիծանք յարմար է, տեսէք և դատեցէք սա խօսքերը, որ թշնամի բերանները մէջ իբրև թէ Պատրիարքի կողմնակիցներու մտածութեանց արտայայտութիւնն լինէր. « Եթէ ազգային պատրիարքարանն ան« արժաթ է, պատճառն քաղաքական « մտայներն են, եթէ ազգային ժողով« ներն ամբողջ նիստեր կ'անցնեն միջա-

ՊՂՏՈՒՅՔ

Ընթ. տարեգրությունից վերցրինք հետևյալ հետաքրքրական տեղեկությունները Ղարսի մասին։

Ղարսը, որ Ռուսաստանի Կովկասյան նահանգներից մեկն է, գտնվում է Ղարսի գետի ձախ ափին, ծովի մակերևույթից 6100 ոտնաչափ բարձրության վրա։ Ղարսի գետը սկիզբ է առնում Ալադաղ լեռներից, հոսում է Ղարսի միջով և թափվում Արաքսի մեջ։ Ղարսի գետի ջրերը ոռոգում են Ղարսի դաշտավայրը, որ ունի 30 վերստ երկարություն և 15 վերստ լայնություն։ Ղարսի գետի ջրերը ոռոգում են նաև Ղարսի դաշտավայրի արևելյան կողմում գտնվող մի քանի գյուղերի պարտեզները։ Ղարսի գետի ջրերը ոռոգում են նաև Ղարսի դաշտավայրի արևելյան կողմում գտնվող մի քանի գյուղերի պարտեզները։ Ղարսի գետի ջրերը ոռոգում են նաև Ղարսի դաշտավայրի արևելյան կողմում գտնվող մի քանի գյուղերի պարտեզները։

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄՏՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ «ՏԵՂԵԿԱԳԻՐ»

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ

ՀԱՏՈՐ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Պատասխանատու խմբագիր՝ Ա. Ա. ՊԱՊՅԱՆ

Տպագրված է ՀՍՍՀ ԳԱ Հրատարակչության 1977 թ. պլանով

Հրատ. № 1-2-1-77/1-1-1-77

Հանձնված է արտադրության 15/VII 1977 թ.

Ստորագրված է տպագրության 15/XII 1977 թ.

Թուղթ № 1, 70×108 1/16, տպ. 9 մամուլ, 12,6 պայմ. մամուլ, 12,6 հրատ. մամուլ

Տպաքանակ 3000 օրինակ

Պատվեր № 1133

Գինը 1 ռուբ. 80 կոպ.

ՀՍՍՀ Գիտությունների ակադեմիայի տպարան, Երևան, Բարեկամության 24

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄՏՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ «ՏԵՂԵԿԱԳԻՐ»

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ

ՀԱՏՈՐ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՎԱՆՔԵՐԻ
ՆՈՐ ՇԻՆՈՒԱԾ ԽԱՆՈՒԹՆԵՐԸ միջին-փոցո՜ յումՙ դէպի երևանեան հր՜ բաղարակը, Ջանջուլպաղանի տան կից, վարձու են արվում: Յանկացողները կարող են դիմել կարապետ աղա Մուրադեան՜ նին, Շադլինովի քարվանսարա՜ յում, սեպհական գրասենեա՜ կում: 2—5

Ա ռ և տ ր ա կ ա ն տ ն ի ց·

ԵՂԲԱՐՔ Կ· և Ս· ՊՈՊՈՎ՜ ՆԵՐ·

Յայտնում ենք ի գիտութիւն հա՜ սարակաց, որ 2-րի յունիսի ներկայ ամի կը լինի մեր մագազինի բացումն **ԹԻՖԼԻՋ** քաղաքում, ԳՕԼՕՎԻՆՍ՜ կի ՊՐՈՍՊԵԿՏՈՒՄ, ՄԻՐԻՄԱՆՈՎԻ ՏԱ՜ ՆԸ, ուր ԹԷ՛ մեծ և ԹԷ՛ փոքր քա՜ նակութեամբ կը ծախվի մեր ֆիրմա՜ յի **ՁԱՅ**, որ կշռուած է մեր հըս՜ կողմութեամբ մեր գլխաւոր մագազի՜ նում ՄՈՍԿՎԱՅՈՒՄ: Բացի **ՁԱՅԻՑ** մագազինում կը ծախվի **ՇԱՔԱՐ** և **ՍՈՒՐՃ**: 1—5 (շ)

Ա Լ Է Ք Ս Ա Ն Դ Ր Ո Վ Ս Կ Ի Ո Ւ Ս Ո Ւ Մ Ն Ա Կ Ա Ն Ո Ւ Մ

Ա Լ Է Ք Ս Ա Ն Դ Ր Ո Վ Ս Կ Ի Ո Ւ Ս Ո Ւ Մ Ն Ա Կ Ա Ն Ո Ւ Մ բարձր դասատուի մի աշա՜ կերտ այս ամառուան արձակուրդնե՜ րին կամենում է դասեր տալ և պատրաստել աշակերտներ նոյն ու՜ սումնարանի և գիմնազիաների մի՜ ջին դասարանաց համար: Համաձայն է և ամարանոց գնալ աշակերտների հետ: Հարցնել «Մեղուի» խմբագրա՜ տան: 5—8

ՓՈՓՈԽՄՈՐ
Յ· Կ· ԱՅՎԱԶՈՎՍԿԻՑ

Գեղարուեստական պատկերները արդէն վաղուց է որ համաշխարհական ա՜ նուն են ստացել և զարդարում են ուրա և օտարազգի մեծատուների շքեղ սալոնները և պատկերական կալերէյները, բայց հասարակութեան մեծա՜ գոյն մասին համար դրքա իւրեանց թանգութեան պատճառով բոլորովին անմատչելի են:

Ձգտանելով իւր տաղանդի բազմաթիւ պատուղներին, որոնք արժան դի՜ նով յանկանում են ունենալ նորա պատկերների ճիշդ արտատիպը պրո՜ ֆեսոր Ա.Յվազովսքին լինձ բացառական իրաւունք տուաւ հրատարակել իւր ամենաերևելի պատկերներուն **ԻՒՂԱՏԻՊ** (Oleographie) **ԱՐՏԱՏԻՊՈ՜ ՆԵՐԸ** (Facsimile), այն անհրաժեշտ պայմանով որ հրատարակութիւնը լինի կատարեալ գեղարուեստական գործ:

Մտադիր լինելով հրատարակել մի շարք պ. Ա.Յվազովսքիյի հռչակաւոր պատկերների, ես ներկայ ժամանակս ձեռնամուխ եղայ փորձի համար արտատպել նորա վերջի պատմական պատկերները **Խ· ԿՈՆՍՏԱՆ ՁԱՆԱ՜ ՊԱՐՀԻՄ ԴԷՊԻ ԱՄԵՐԻԿԱՅ** (ԱԼԵՔՍԱՆԴՐՈՒՊՈԼԻՍ ՈՂԿԱՆՈՍԻ ՎԵՐԱՅ) և **ԿՈԼՈՒՄԲՈՒ ՀԱՆԴԻՍԱՒՈՐ ԿԵՐՊՈՎ ՅԱՄԱՔ ԻՋՆԵԼԸ ՍԱՆ-ՍԱԼՎԱԴՈՐ ԿՂԶՈՒՄ** (ԱՐԵ՜ ԳԱԿԻ ԾԱՂՈՒՄԸ): Երկու պատկերներն էլ երկայնութեամբ մի ար՜ շին (70½ sent) և լայնութեամբ 12 վերշոկ (52½ sent) արտատպում են **Բ ե ր լ ի ն ո ւ մ Շ ա ե յ ն բ օ կ ի ե ր և ե լ ի գ օ ր ծ ա ր ա ն ո ւ մ** և լոյս կ՛տեսնեն ներկայ տարուս օգոստոսին:

Որովհետև օլեօգրաֆիկական պատկերների քանակութիւնը ձիշտ գեղ՜ արուեստական արտատիպ ստանալու նպատակով խստիւ սահմանափա՜ կուած է, ուստի ցանկացողը կարող են, կանխիկ ստորագրուել, դիմելով լինձ հետևեալ հասցէով՝ С. Петербургъ Владимірская ул. д. 15. кв. 8. Леониду Егоровичу Мазирову. Երկու պատկերներին ստորագրո՜ ղները ճանապարհածախսով հանդերձ վճարում են 28 **ՌՈՒԲԼԻ**, իսկ մի հատին 17 **ՌՈՒԲԼԻ**. փողը կարելի է ուղարկել մասամբ, բայց յառաջ քան բոլոր գումարի լրումն պատկերները չեն ուղարկվիլ:

Օլեօգրաֆիական պատկերները պիտի ուղարկվին կտաւի վերայ քաշած պատեր զարդարելու համար, կամ բրիստոլեան թղթի վերայ ալբոմների համար, ուստի ստորագրողները թող բարեհաճեն յայտնելու կտաւի թէ թղթի վրայ ցանկանում են ստանալ յիշեալ պատկերները:

Պատկերների համար պատրաստում են **շքեղ շրջանակներ** զանազան արժանաւորութեամբ և կուղարկվին ստորագրվողներին ըստ նոցա պահանջ՜ ման ամենամատչելի գնով:

Տաճկաստանցիք կարող են դիմել հետևեալ հասցէով՝ St. Peters՜ bourg, rue Wladimirsky № 15 mr. L'Maziroff, ուղարկելով մէկ պատկերի համար 50 **ՖՐԱՆԳ**, իսկ երկուսին միասին 80 Ֆր:

Հրատարակիչ Լ. Մազիրեանց.

«ՓՈՐՁ ամսագրի ներկայ տարուայ II հատորում հրատարակուեցաւ մեր յայտարարութիւնը «**ՀԱՅՈՑ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՄԱՍԻՆ**»: Այդ գրուածքը լրացած է աւելի քան տասնուչորս երեսից: Յանկանալով մշակել մեր բարբառների խնդիրը, մի՜միտ պա՜ տրաստել նորանց մասին և պարզաբանել մի ծառայութիւն մատու՜ ցանել մեր լեզուի պարզացմանն ու կանոնագրութեանը՝ մենք վերոյիշեալ յայտարարութեան մէջ առաջարկում ենք մեր բանա՜ սէրներին և առհասարակ գրելու կարողութիւն ունեցող անձանց, որ մեր տուած և գրականական լեզուով խմբագրած հինգ **ՀԱՏՈՒԱԾՆԵՐԸ** թէ քաղաքներուն և թէ գիւղերուն **ՓՈԽԱԴՐԵՆ ԻՐԱՆՑ ՏԵՂԱԿԱՆ ԲԱՐԲԱՌՈՎ**:— Իսկ մենք բաւական թուով փոխադրութիւններ ստանալուց յետոյ՝ կը կազմենք մի գիրք, որի մէջ տպագրուած կը լինին մեր աշխատակիցների ազգանունները և, որից նորա կը ստանան մի—մի օրինակ: Մանրամասնութիւնները կարելի է կարդալ «Փորձ» մէջ:

25—40

Յ· Նազարեանց:

ԹԻՖԼԻԶԻ ՀԱՅՈՑ ԾԽԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅ 1881 Թ· ՏԱՐԵԿԱՆ ՀԱՐՑԱՓՆՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ:

Յունիսի 1 և 2-րին կուիւռ ս· Աստուածածնին եկ· ուսումն·
« 3 և 4-րին Ջրարշէն եկ· ուսումնարանում·
« 5-րին ,, Շամքոռեցոց եկ· ուսումնարանում·
« 6-րին ,, Զորաբաշ եկ· ուսումնարանում·
« 8-րին ,, Ս· կարապետ եկ· ուսումնարանում·
« 9-րին ,, Զուղուրկիթի ս· · Աստուած· եկ· ուսումն·

Թեմական վերատեսուչ Գ· Բարխուդարեանց

Ա Մ Ա Ռ Ա Ն Ո Յ Ն Ե Ր·

Տփխիսից, մօտ 8 վերստ հեռա՜ւորութեամբ, — **ՁԱՓԱՐԱՇԻ՜ ՆՈՒՄ**, փոքր լիլոյի մօտ, վրաց խուիերայի կէս ճանապարհի վերայ արուում են վարձով **ԵՐԿՈՒ Ա՜ ՄԱՌԱՆՈՑՆԵՐ**, իւրաքանչիւրը՝ երեք սենեակից բաղկացած իւրեանց առանձին խոհանոցներով: Դէպ մասին կարելի է հարցնել ախորջը—Զաքա՜ րիայ Գրիգորեանցին,—նորա գրասե՜ նեակում: 2—10

Ծխախոտի մագազինում «Կովկաս» հիւրանոցի տակը երեւանեան հրապարակի վերայ, տացված է ԿՕՍՏԱՆԴՈՒՊՕԼՍԿԻ խոսկան Տաճկատանի **ԾԽԱԽՈՏ** նոր կտրած Սամսօն և Դէլիլ, որ գերազանցում է թէ համով և թէ արտաքուստ:

4—6

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՏՈԿՈՍՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻՍԻ ՓՈԽԱԴԱՐՁ ՎԱՐԿԻ ԸՆԿ·
Ապրիլի 15-ից մինչև յոյր կարգադրութիւն.

Վճարում է·	Վերցնում է·
1. Ընթացիկ հաշուով·	1. Ջեղջուման առևտրական մուրհակների 6 ամսով · · 7%
ա. Հասարակ · 4%	2. Ջեղջուման մուրհակների, ապահովութեամբ անշարժ կայից · 7%
բ· Պայմանաւոր 4½%	3. Արժէթղթերի գրաւականով ընդունելիք պետական բանկայից 6 ամսով · · 7%
2 Գումարների ետաղ·	4. Մասնաւոր ընթացիկ հաշիւ·
ա. Մինչև ցպահանջ 4%	ա. Ապահոված տոկոսաբեր թղթերով 7%
բ. 6 ամսով · 5½%	բ. Մուրհակներով ապահովացրած երկու բաժորագրութեամբ 7½%
գ· Մի տարով · 6%	5. Ջեղջուման կըրաբոնքների և թղթադրամների · · 7%
դ· Երկու տարով և աւելի · · · · · 6%	

ԹԻՖԼԻՍԻ ՅԱՌՏԻՏՐԱԿԱՆ ԲԱՆԿԱՆ

Վճարում է·	Վերցնում է·
1. Ընթացիկ հաշուով 4%	1. Ջեղջուման առևտրական մուրհակների մինչև 6 ամիս 8%
2. Մինչև ցպահանջ առանդի · · · 4%	2. Արժէթղթերի գրաւականով. ա. Ընդունելիք պետական բանկայից 7% բ. Անընդունելիք պետական բանկայից 8%
3. 6 ամսական առանդի · · · · · 5%	3. Մասնաւոր ընթացիկ հաշիւներ՝ ա. Ապահովացրած արժէթղթերով · 7% բ. Ապահովացրած մուրհակներով · 8½%
4. Երկու և աւելի տարով առանդի · 6%	

Ցանձնարարութիւններ ½% — 2%·

ՓՈԹԻ—ԹԻՖԼԻՍՅԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ.

Թիֆլիսից դէպի Փոթի դուրս է գնում.

	ժամեր. առաւ.	կէս օր.	երեկ.	տեղերի գինը. I կլ.	II կլ.	III կլ.
				ռ. կ.	ռ. կ.	ռ. կ.
Թիֆլիզ·	9. 21	12. 56	5. 18			
Մցխէթ	10 11	1. 57	6. 27	1. 13	85	44
Գօրի ·	11. 58	4. 35	9. 43	4.	3.	1. 53
Մխխայլ·	1 29	6. 45	11. 57	6. 30	4. 73	2. 42
		գիշեր				
Բիօն ·	6. 56	1. 45		11. 25	8. 44	4. 31
Փոթի ·				16. 31	12. 24	6. 26

Փոթիից դէպի Թիֆլիզ.

	ժամեր. Առաւ.	երեկոյ.	գիշեր.	տեղերի գինը. I կլ.	II կլ.	III կ.
				ռ. կ.	ռ. կ.	ռ. կ.
Փոթի ·	9. 3	10. 22				
Բիօն ·	12. 13	3. 30		5. 13	3. 84	1. 97
Մխխայլ·	5. 39	10. 1	1. 37	10. 1	7. 51	3. 84
		կէսօր.				
Գօրի ·	7. 5	12. 20	4. 8	12. 33	9. 24	4. 73
Մցխէթ	8. 50	3.	7. 59	15. 19	11. 39	5. 82
Թիֆլիս				16. 31	12. 24	6. 26

Երկաթուղու գնացքը Թիֆլիզից Փոթի.—Առաւօտեան 9 ժ. 21 ր., որ կը հասնի Փոթի երեկ. 9 ժ. 50 ր. Կէսօրից յետոյ 4 ժ. 30 ր., որ կը հասի Փոթի առաւօտեան 10 ժ. 7 ր.

ՉԵՆ ՀԱՅՐԱՑ ՀԻՒԱՆԴԻՐՆԵՐ

31 մայիսի

Դէպրդ Ռօմանովիչ Լբիատովին, վրժէնևիվկուն, Պաւլովիչևային, Իոսիֆ Տիէդէլչվիլին, վ.սարիօն Կվիրկվէլին, Դէպրդ Մկրտումեանցին, Իվան Կէվէնաչվիլին, Տիտօֆին, Սօնիկովին,

ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Կուվկայում, Սիմէօնովսկի փողոցի վրայ, Հախվերդեանի տանը,

Հիւանդները ընդունում են ամեն օր, նաև տօն օրերին առաւօտեան ժամի 9—11. ԼՈՒՆԿՆԵՎԻՉ— աչքերի, կաշու և վէներական հ., ԲՈՒԴԿՕՎՍԿԻ — կանանց և ներքին հ., ժամի 11—1., ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—խիւրուրգիական և վէներական (սիֆիլիտական) հ., ՇԱՀԱԶԻԶԱՆՑ — ներքին հ. ժամի 5—7. ՊԱՎԼՕՎՍԿԻ--ջղային, հոգեկան և ներքին հ., ՈՒՇԱԿՈՎ— երեխայոց հ., ՅԱՂԿԱՀԱՅՏՈՒԹԻՒՆ առաւօտեան ժամի 9—11, չորեքշաբթի և չարաթ օրերը երեկոյեան ժամի 7—8 ընդհանուր ԲԺՇԿԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ: Հիւանդասնոցը ունի դիչերապահ բժիշկ և ընդունում է ԴԻՇԵՐՕԹԻԿ հիւանդներ:

ԱՂՔԱՏՆԵՐԻՆ անվարձ է բժշկական խորհուրդը և դեղը:

Հիւանդանոցում բըռնակալում է բժիշկ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԸ:

ԲԺՇԿԱՆՈՑ

Հիւանդների ընդունելութիւնը սկըսվում է ժամը 9-ին և չարունակվում է մինչև 1 կէսօրից յետո:

Երէ—շաբթի.— Գ ա վ ր ո ն ա կ ի՝ մանկաբարձական և կանանց հիւանդութեանց համար,· Գ օ ր ա լ է վ ի չ և Լ ի ս ի ց ի ա՝ ներքին հ., Ռ օ մ ա ն ե ա ն ց՝ կանանց և երեխայոց հ., Բ ա բ ա յ ե ա ն՝ ջղային և ներքին հ., Շ ա հ մ ր օ ր ս կ ի՝ վէներական և կաշուի հ., Գ ր ի չ ա ր ե ա ն ց 1-ն՝ խիւրուրգիական և աչքի հ.:

Երեքշաբթի.—Մ ի ն կ ե վ ի չ՝ խիւրուրգիական հ., Ր է յ ի՝ աչքի հ., Բ ա խ ո ւ ա մ վ՝ մանկաբարձական, կանանց և երեխայոց հ., Լ ի ս ի ց ի և Վ ե ր մ ի չ և՝ ներքին հ., Պ ե տ ր ո վ ս կ ի վէներական հ.:

Չորեքշաբթի.— Կ ր ա ն օ գ լ ե ա դ ո վ և Լ ի ս ի ց ի՝ ներքին հ., Գ ր ի չ ա ր ե ա ն ց 2-դ՝ և Շ ա հ մ ր օ ր ս կ ի սիֆիլիտական և կաշուի հ.:

Հինգշաբթի.— Գ ա վ ր ո ն ա կ ի՝ մանկաբարձական և կանանց հ., Ր է յ ի՝ աչքի հ., Բ ա խ ո ւ ա մ վ՝ կանանց և երեխայոց հ., Բ ա բ ա յ ե ա ն՝ ջղային և ելեքտրականութեամբ բժշկելի հ. (электротерапія), Լ ի ս ի ց ի և Պ ե տ ր ո վ ս կ ի՝ ներքին հ., Գ ր ի չ ա ր ե ա ն ց՝ սիֆիլիսի և սեռական հ.:

Ուրբաթ.—Մ ի ն կ ե վ ի չ՝ խիւրուրգիական հ., Բ ա խ ո ւ ա մ վ՝ մանկաբարձական, կանանց և երեխայոց հ., Կ ր ա ն օ գ լ ե ա դ ո վ՝ Լ ի ս ի ց ի և Վ ե ր մ ի չ և՝ ներքին հ., Շ ա հ մ ր օ ր ս կ ի՝ վէներական և կաշուի:

Շաբաթ. — Լ ի ս ի ց ի՝ ներքին հ., Ր է յ ի՝ աչքի հ., Բ ա բ ա յ ե ա ն՝ ջղային և ներքին հ., Գ ր ի չ ա ր ե ա ն ց 2-դ՝ կանանց և ներքին հ., Պ ե տ ր ո վ ս կ ի՝ վէներական հ.:

Օ ր բ է կ ա տ ա ո ւ մ հ. ընդունում է իր մօտ խնդրած հիւանդներին ամենայն ժամանակ բժշկանոցի տանակով:

Դիրեկտոր բժշկանոցի բժ. Լիսիցի:

ՓՈՍՏ

Թիֆլիզի փոստի կառավարութեան մէջ ընդունվում են և տըրվում, ամեն տրակտի և ամեն ակսակ թէ նամակներ, թէ լրագիրներ և թէ ծանր փոստի իրեր, ամենայն օր, բացի տօն օրերը, առաւօտեան 8 ժամից մինչև 1 կէսօրից յետո: Բացի դրանից ամեն օր, բացի կիւրակէ և տօն օրերը, առաւօտեան ժամը 7-ից մինչև 8 և 3-ից մինչև 7-ը կէսօրից յետո, իսկ կիւրակէ և տօն օրերը 7 ժամից մինչև 10 առաւօտեան և 3-ից մինչև 7 կէսօրից յետո, ընդունվում են և տըրվում հասարակ նամակներ.

Ռուսաստանի և արտասահմանի փոստը դուրս է գնում Թիֆլիսիցը ամեն օր բացի կիւրակէ և տօն օրերը, փոթիի տրակտը (երկաթուղու միջոցով) ամեն օր, Երևանեան կարմիրը երէքշաբթի, հինգշաբթի և չարաթ, Նուխուն և Կախէթինը կիւրակէ և չորեքշաբթի, Բագուինը, Եվրասիատոպոլի վերայով երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ:

Ն ա մ ա կ ն ե ր.

Քաղաքային փոստով՝ նամակն արժէ 3 կ.:

Բայ նոսեակ օտար քաղաքներ 3 կոպ.:

Ռուսաստան և Եվրոպայի բոլոր երկիրները ծածկուած նամակը արժէ (1½ լոթի ծանրութեամբ) 7 կ.:

Պատուիրած նամակների գինը կրկնակի է:

ДОЗВОЛЕНО ЦЕНЗУРОЮ ТИФЛИСЪ 1-го іюня 1881 г. Типографія Амб. Энфіаджіанцъ и К. Տուն բժշկապետ Մ. Թոմինեանց.